ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- նոյեմբերի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N374-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքը, այդ թվում՝ օրենքի 22-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 374-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) էներգիայի պահեստավորում.».

2) Կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«6) մինչև 1 ՄՎտ դրվածքային հզորությամբ պահեստավորող կայանում էներգիայի պահեստավորման գործունեությունը՝ կառուցման և պահեստավորման ժամանակահատվածներում.

7) 1 ՄՎտ-ից ավելի դրվածքային հզորությամբ կայանում բացառապես սեփական կարիքների համար էներգիայի պահեստավորման գործունեությունը՝ պահեստավորման ժամանակահատվածում: Էլեկտրական էներգիա արտադրող անձի դեպքում սեփական կարիքի համար էներգիայի պահեստավորում է համարվում նաև սեփական արտադրության էլեկտրական էներգիայի կուտակումը, ինչպես նաև իր՝ որպես արտադրողի պայմանագրային պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ պահեստավորումը:».

3) Կարգի 9-րդ՝

ա. կետում «տրվում են՝ հաշվի առնելով» բառերից հետո լրացնել «էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովումը,» բառերը,

բ. կետի 1-ին ենթակետից հանել «վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող», «տարեկան» բառերը,

գ. կետի 2-րդ ենթակետում «էլեկտրական էներգիայի արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

4) Կարգի 9.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9.1. Այն դեպքում, երբ առկա է միայն առանց օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայանում էլեկտրական էներգիա արտադրող կայանների գումարային հզորությունների չափաքանակ, նման կայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա կարող է տրամադրվել, եթե կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու համար հայտատուն գրավոր կարգով Հանձնաժողովին ուղղված դիմումով հրաժարվում է Օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չի կարող:».

5) Կարգի 9.2-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այն դեպքում, երբ առկա է միայն առանց օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայանում էլեկտրական էներգիա արտադրող կայանների գումարային հզորությունների չափաքանակ, բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձին էլեկտրական էներգիայի վաճառքի իրավունք կարող է տրվել, եթե բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձը գրավոր կարգով Հանձնաժողովին ուղղված դիմումով հրաժարվում է Օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չի կարող:».

6) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.4-րդ կետով.

«9.4. Մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ պահեստավորող կայաններում էներգիայի պահեստավորման լիցենզիաները տրամադրվում են՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող՝ տրամադրվող լիցենզիաների շրջանակում գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ առաջարկությունները: 30 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ պահեստավորող կայաններում էներգիայի պահեստավորման լիցենզիաները տրամադրվում են՝ նաև ստանալով նշված լիազորած մարմնի համաձայնությունը:».

7) Կարգի 24-րդ կետում «էլեկտրական էներգիայի արտադրության» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև էներգիա պահեստավորող կայանում էներգիայի պահեստավորման» բառերը.

8) Կարգի 25-րդ կետի՝

ա. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) մինչև 30 Մվտ դրվածքային հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիաների պարագայում՝ տվյալ կայանների գումարային հզորությունների առավելագույն չափաքանակներ առկա չեն, լրացել են կամ լիցենզիան տրամադրելու պարագայում կգերազանցվեն.».

բ. կետի 7-րդ ենթակետում «էլեկտրական էներգիայի արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

գ. կետի 8-րդ ենթակետում «էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման», իսկ «առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության)» բառերից հետո «, իսկ էներգիայի պահեստավորման դեպքում՝ էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման» բառերը, իսկ «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

դ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ ենթակետով.

«9) օրենքով նախատեսված այլ հիմքերով:».

9) Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արտադրողի դեպքում, այդ թվում՝ կայանի միացումն էլեկտրական ցանցին իր՝ կայանի հայցվող հզորությունը չգերազանցող սպառման համակարգի միջոցով նախատեսելիս, էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիաների պարագայում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչպես նաև էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու տեխնիկական պայմաններ կամ տեղեկանք՝ էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվության նշումով.».

10) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին գլխով.

«**ԳԼՈՒԽ 3.1. ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ**

51.2. Էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էներգիա պահեստավորող կայան կառուցելու (վերակառուցելու), շուկայի կանոնների համաձայն՝ մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա գնելու և վաճառելու, շուկայի մասնակիցներին պահեստավորման ծառայություն մատուցելու իրավունք.

51.3. Էներգիայի պահեստավորման լիցենզիան տրամադրվում է՝

1) էներգիայի պահեստավորման երաշխիքով՝ ըստ հայտերի ներկայացման առաջնահերթության, սույն կարգի համաձայն անցկացվող մրցույթի արդյունքով կամ պետություն-մասնավոր գործընկերության գործարքի շրջանակում.

2) առանց էներգիայի պահեստավորման երաշխիքի՝ ըստ հայտերի ներկայացման առաջնահերթության, եթե հայտատուն լիցենզիա ստանալու համար դիմելիս սույն կարգով սահմանված կարգով հրաժարվում է էներգիայի պահեստավորման երաշխիքից:

51.4. Էլեկտրական էներգիայի հաղորդման կամ բաշխման լիցենզիա ունեցող անձանց էներգիայի պահեստավորման լիցենզիան տրամադրվում է սույն կարգով սահմանված ընդհանուր կարգով՝ Օրենքով նախատեսված պայմանների և սահմանափակումների պահպանմամբ:

51.5. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող՝ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի առաջարկի դեպքում էներգիայի պահեստավորման լիցենզիաները տրվում և համապատասխան սակագները սահմանվում են սույն կարգի N 8 հավելվածի համաձայն անցկացվող մրցույթի արդյունքով՝ հաշվի առնելով պետություն-մասնավոր գործընկերության մասին օրենսդրության կիրառելի կարգավորումները.

51.6. Կառուցման ժամանակահատված ներառող էներգիայի պահեստավորման լիցենզիայի գործողության ժամկետը կառուցման և պահեստավորման ժամանակահատվածների գումարն է, իսկ բացառապես սեփական կարիքի համար էներգիայի պահեստավորման լիցենզիայի տրամադրման դեպքում՝ կառուցման ժամանակահատվածը.

51.7. Կայանի կառուցումը, բացառությամբ սույն կարգով նախատեսված լիցենզավորման ոչ ենթակա դեպքերի, կարող է իրականացվել էներգիայի պահեստավորման լիցենզիայում կառուցման ժամանակահատվածի ամրագրման դեպքում:

51.8. Էներգիայի պահեստավորման լիցենզիայում կառուցման ժամանակահատվածը սահմանվում է երկու տարի վեց ամիս կամ հայտով հայցվող ժամկետով, եթե այն պակաս է սույն կետով սահմանված ժամկետից:

51.9. Պետություն-մասնավոր գործընկերության գործարքի կամ սույն կարգի N8 հավելվածի համաձայն անցկացվող մրցույթի շրջանակում էներգիայի պահեստավորման լիցենզիա տրամադրվում և լիցենզիայում կառուցման ժամանակահատվածն ամրագրվում է համապատասխանաբար՝ հաշվի առնելով պետություն-մասնավոր գործընկերության գործարքը կամ մրցույթի պայմանները:

51.10. Էներգիայի պահեստավորման լիցենզիաները Հանձնաժողովի կողմից տրամադրվում են, եթե լիցենզիայի տրամադրման արդյունքում չի գերազանցվում սույն կարգի 9.4-րդ կետով նախատեսված առաջարկությամբ ներկայացված չափաքանակը:

51.11. Էներգիայի պահեստավորման լիցենզիա ստանալու մեկից ավելի հայտերի ներկայացման դեպքում, որոնց բավարարումը կհանգեցնի սույն կարգում ամրագրված գումարային հզորության սահմանաչափի գերազանցման, հայտերն ուսումնասիրվում և քննարկվում են ըստ ներկայացման հաջորդականության, բացառությամբ սույն կարգի N 8 հավելվածի համաձայն անցկացվող մրցույթի կամ պետություն-մասնավոր գործընկերության գործարքի:

51.12. Սույն կարգի 51.10-րդ կետով սահմանված սահմանաչափի շրջանակում էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձանց՝ լիցենզիաներով ամրագրված հզորությունների փոփոխման դիմումները Հանձնաժողովը քննարկում է ըստ դիմումների ներկայացման հաջորդականության և յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված սահմանաչափի շրջանակում:

51.13. Սույն կարգի 42.1-ին կետի պահանջները կիրառվում են Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի ցանցային կանոններին համապատասխան սահմանափակման ենթակա պահեստավորողի նկատմամբ:

51.14. Էներգիայի պահեստավորման լիցենզիայի շրջանակում կայանի կառուցման և վերակառուցման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն կարգի 43-51.1-ին կետերի դրույթները: Նշված դրույթներում արտադրության կամ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի, այդ լիցենզիան ունեցող անձի և կայանի վերաբերյալ կարգավորումները կիրառվում են համապատասխանաբար էներգիայի պահեստավորման լիցենզիայի, այդ լիցենզիան ունեցող անձի և պահեստավորող կայանի նկատմամբ՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են սույն կետում նշված հարաբերությունների նկատմամբ: Սույն կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջները պահեստավորող կայանների նկատմամբ կիրառվում են միայն 1 ՄՎտ-ից ավելի դրվածքային հզորությամբ պահեստավորող կայանների վերակառուցման դեպքում:».

9) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.1-ին կետով.

«52.1. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել էներգիայի պահեստավորման գործունեությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:».

10) Կարգի 57-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել էներգիայի պահեստավորման գործունեությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:».

11) Կարգի 65-րդ կետում «Էլեկտրական էներգիայի արտադրության» բառերից հետո լրացնել « լիցենզիա և էներգիայի պահեստավորման» բառերը, «արտադրությանը» բառից հետո՝ «, պահեստավորմանը» բառը, իսկ «էլեկտրական էներգիայի գնման երաշխիքները» բառերից հետո՝ « և համապատասխանաբար էներգիայի պահեստավորման երաշխիքները» բառերը.

12) Կարգի 73-րդ կետում «էլեկտրական էներգիայի արտադրության» բառերից հետո լրացնել «էներգիայի պահեստավորման,» բառերը.

13) Կարգի 77-րդ կետի 1-ին ենթակետում «համակցված արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

14) Կարգի 78-րդ կետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

15) Կարգի 81-րդ և 81.2-րդ կետերում «համակցված արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

16) Կարգի N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

բ. 7-րդ կետում «հայցվող կառուցման և արտադրության» բառերից հետո լրացնել «, էներգիայի պահեստավորման լիցենզիաների դեպքում՝ կառուցման և պահեստավորման» բառերը, իսկ «միայն արտադրության» բառերից հետո՝ «, պահեստավորող կայանի դեպքում՝ միայն կառուցման կամ միայն պահեստավորման» բառերը.

17) Կարգի N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետի 1-ին նախադասությունում «համակցված արտադրության» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման» բառերը.

բ. 1-ին կետի 2-րդ ենթակետում «հատակագծի պատճենը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ՝ մրցութային ընթացակարգով տրամադրվող լիցենզիաների ստացման հայտի»

գ. 1-ին կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) արտադրողի կամ պահեստավորողի դեպքում, այդ թվում՝ կայանի միացումն էլեկտրական ցանցին իր՝ կայանի հայցվող հզորությունը չգերազանցող սպառման համակարգի միջոցով նախատեսելիս, էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ կայանի միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք՝ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիաների դեպքում,».

դ. 1-ին կետի 10-րդ ենթակետում «էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման երաշխիքից» բառերը, «հրաժարվում է» բառերից հետո՝ « համապատասխանաբար» բառը, իսկ «էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից» բառերից հետո՝ « կամ Օրենքի 35.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիքից» բառերը.

ե. 2-րդ կետի առաջին նախադասությունում «համակցված արտադրության» բառերից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

զ. 2-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) արտադրող, այդ թվում՝ կայանի միացումն էլեկտրական ցանցին իր՝ կայանի հայցվող հզորությունը չգերազանցող սպառման համակարգի միջոցով նախատեսելիս, էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք՝ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի կամ էներգիայի պահեստավորման լիցենզիայի դեպքում,».

է. 2-րդ կետի 7-րդ ենթակետում «էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման երաշխիքից» բառերը, իսկ «էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից» բառերից հետո՝ « կամ Օրենքի 35.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիքից» բառերը.

20) Կարգի N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտատուն սույն կետով սահմանված դեպքերում Հանձնաժողով է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ բանկի կողմից տրամադրված երաշխիք, որով բանկը գրավոր պարտավորություն է ստանձնում հայտատուի կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սույն կարգի 3-րդ կետի համաձայն հաշվարկված գումարը, Հանձնաժողովի որոշման ~~կամ գրության~~ հիման վրա, Հանձնաժողովի սահմանած ժամկետում, անվիճելի և անառարկելի կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Երաշխիքը ներկայացվում է կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կամ էներգիայի պահեստավորման՝

1) լիցենզիա ստանալու համար.

2) լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում.

3) լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար, ինչպես նաև նշված ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում.

4) լիցենզիա ունեցող անձի կողմից օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը (դրական փորձագիտական եզրակացություններով) Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում:».

բ. 2-րդ կետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը (այսուհետ՝ երաշխիքով սահմանված գումար) պետք է հավասար լինի սույն կարգի 1-ին կետի՝

1) 1-ին և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ կառուցվող կայանի հզորության և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի (այսուհետ՝ բազային տուրք) տասնապատիկի արտադրյալին.

2) 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ ժամանակահատվածն առաջին անգամ երկարաձգելիս կառուցվող կայանի հզորության և բազային տուրքի քսանապատիկի, իսկ երկրորդ և հաջորդող երկարաձգումների պարագայում՝ երեսնապատիկի արտադրյալին.

3) 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ վերակառուցման արդյունքով կայանի ավելացող հզորության և բազային տուրքի տասնապատիկի արտադրյալին:».

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1. Սույն կարգում կայանի հզորություն է դիտարկվում դրա տեղակայվող հզորությունը՝ արտահայտված կիլովատտերով:».

ե. 6-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, բացառությամբ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 46.1-ին կետի, այդ թվում՝ նույն կարգի 51.14-րդ կետի համաձայն դրա կիրառման դեպքում՝ լիցենզիայի տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու դեպքի,».

զ. 6-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը, իսկ 2-րդ ենթակետում «լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածում» բառերը փոխարինել «լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում» բառերով.

է. 7-րդ կետի 1-ին ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը, իսկ «սահմանված» բառը փոխարինել «ամրագրված» բառով.

ը. 7-րդ կետի 2-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը, իսկ «Նախագիծը» բառը փոխարինել «փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը (դրական փորձագիտական եզրակացություններով)» բառերով.

թ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Սույն կարգի 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ կամ դրա կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով սահմանված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը:».

ժ. 3-րդ գլխի վերնագրում «ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ» բառերը փոխարինել «ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ» բառերով.

ժա. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը սույն կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է անհաղթահարելի ուժի: Սույն կարգի իմաստով՝ անհաղթահարելի ուժ են համարվում ցանկացած հանգամանք, դեպք կամ դրանց հետևանք, որոնք հանգեցրել են, հանգեցնում կամ կարող են հանգեցնել լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում են հետևյալ պայմանները.

1) լիցենզավորված անձի վերահսկողության ներքո չեն.
2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված)՝ նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար».

ժբ. 10.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10.1. Լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն անհաղթահարելի ուժի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման այդ լիցենզավորված անձի կողմից:».

ժգ. 11-րդ կետում «ֆորս մաժոր» բառերը փոխարինել «անհաղթահարելի ուժ» բառերով, իսկ նույն կետի 1-ին և 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ, պտտահողմ, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրև, ձնաբուք, սողանք), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտումը, գործադուլները, հասարակական անկարգությունները.».

«3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունն այն դեպքում, երբ դրա արդյունքով չի տրամադրվել, չի երկարաձգվել համապատասխան պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն օրենսդրության:».

ժդ . 12-րդ կետում «դիմել» բառը փոխարինել «դիմելու» բառով, «պահանջներին բավարարելու» բառերը՝ «պահանջները բավարարելու» բառերով, իսկ «ֆորս մաժոր» բառերը՝ «անհաղթահարելի ուժ» բառերով.

21) Կարգի N 7 հավելվածի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ, 12-րդ և 13-րդ ենթակետերով.

«11) դրվածքային հզորությունը (ՄՎտ)՝ _____.

12) պահեստավորվող էներգիայի ծավալը (ՄՎտժ)՝ _____.

13) օգտակար գործողության գործակիցը՝ _____:».

22) Կարգը լրացնել N 8 հավելվածով՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2026թ.